

կ'առնուր ընելու այդ նուէրը. որով կը տարբերէր գոհութեան կամ ողորմութեան ինքնաշարժ մատաղներէն՝ զոր տեսանք: Այս անունն ու սահման յայտնի են՝ մեզ ծանօթ ժԱ դարու Մաշտոցէն, որ ունի առանձին «Կանոն տեսաւսական աւրհնելոյ: Ածեն զխոստացեալն» եւն: Ճնորհալին մի եւ նոյն ոճով կը բացատրէ զայն. «Խոստացեալն Աստուծոյ՝ զոր տեսաւսական կոչեն» (Ընդհ. 160). նոյնպէս Որբելեանի քով եւս (ՀԿՃ. Ժ), մինչ Տարօնացին հոմանշով «տէրութեան» կ'անուանէ (Թէոփ. 266): Իսկ իմաստն է՝ ուղղակի Տեառն խոստացուած ու ձօնելի:

Այդ շրջանէն աւելի կանուխ չեմ հանդիպած կոչմանս. բայց նիւթը շատ հին է, քրիստոնէութենէն ալ հին: Ունէին զայն Հելլէնք (Գար. Դ, 956), Հրեայք (Ղեւտ. Է, 16 եւն) եւ ուրիշներ: Եւ մեր քով կը պատահինք անոր Ե դարէն իսկ՝ տարբեր բառերով: Վահան ի Վաղարշապատ կ'երթայ կատարելու «գոշխոսս պատարագաց» (Փրպ. 430). եւ յաղթանակներէն վերջ նոյնպէս կը կատարէ «զսովորական ոշխոսս եւ զպատարագս» (նոյն, 479): Ս. Սահակայ կանոնք կը յիշատակեն՝ ի մէջ այլոց՝ եւ «զամենայն ընծայս ոշխոսից» (98):